



**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ,
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ
ԱՌ
ՀԱՒԱՏԱՅԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՀԱՅՈՑ
ՈՐ Ի ՖՐԱՆՍԱ**

Գոհուրեան և առ Աստուած փառաբանութեան պգացումով լիցքաւորուած վերադարձանք Ֆրանսահայութեան տուած Մեր անդրանիկ հովուապետական այցելութենէն ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ուրկէ կ'ուղղենք Ձեզի Մեր այս գիրը Ս. Լուսաւորչի հաւատքով տոգորուն այս հոգևոր կեդրոնէն, ուր կը բաբախէ հայուն քրիստոնէական սիրտը ահաւասիկ 17 դարերէ ի վեր:

Սրտի պարտք կը պգանք առաջին իսկ հերթին Մեր շնորհակալութեան և գնահատանքի խօսքը ուղղել Արևմտեան Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ և Փարիզի Հայոց Առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Գիւտ Արքեպիսկոպոս Նազգաշեանին, Մարսէյի շրջանի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ՝ Գերաշնորհ Տ. Տարօն Եպիսկոպոս Ճէրէճեանին, Լիոնի շրջանի Հայրապետական Պատուիրակի Փոխանորդ՝ Գերաշնորհ Տ. Նորվան Եպիսկոպոս Չաքարեանին, ապգային-եկեղեցական վարչութիւններուն, եկեղեցականաց դասին, Ֆրանսայի մօտ Հայոց Հանրապետութեան Դեսպանութեան, Ընդունելութեան Յանձնախումբերու անդամներուն, բոլոր ապգային, կրօնական, կրթական, մշակութային, բարեգործական, երիտասարդական կապմակերպութիւններուն և հայ մամուլին՝ իրենց ցուցաբերած ապգային-եկեղեցական նախանձախնդիր ոգիին և սիրալիր ու արժանաւայել վերաբերումին ու կապմակերպական աշխատանքին համար: Ձեր բոլորի մասնակցութեամբ և ժրաջան գործունէութեամբ կարելի եղաւ Մեր Հայրապետական այցելութիւնը վերածել օգտաբեր ծառայութեան մը ի սէր և ի խնդիր Ֆրանսայի

տարածքին վրայ ապրող մեր ժողովուրդի համայնքային կեանքի վերաշխուժացման և յառաջիկայի պարգացման:

Մեր Հայրապետական այս գիրով կը փափաքինք ձեր բոլորի մտածումը վերստին սկսել կարգ մը երևոյթներու և համայնական կեանքի երեսներու վրայ, որոնք յատկանշական կողմերը եղան Մեր այցելութեան և որոնց պօրացումը կը նկատենք ապագային համար ձեռք բերելիք նուաճումներու մղիչ ոյժը:

Ա

Հովուապետական Մեր անդրանիկ այցելութիւնը մեծապէս նշանակալից դէպք մը եղաւ Մեր Կաթողիկոսական սպասաւորութեանց շղթային մէջ: Մեր Հայրապետական առաջին այցելութիւնն էր այդ 1997 տարուան շրջանի բացման օրերուն (23 Յունուարէն 7 Փետրուար): Չգացինք - վստահ ենք նաև որ դուք բոլորդ պագիք - որ լեցուն, բեղմնալից, նոյնիսկ եռուն հաւաքական կեանքի արտայայտութիւն մը եղաւ ան, որ կարելիութիւններ ընձեռեց Մեզի ի հաղորդութեան գալու Մեր սիրեցեալ ժողովուրդի պաւակներուն հետ ի մայրաքաղաք Փարիզ և մերձակայ այլ շրջաններ՝ Ալֆորվիլ, Արնուվիլ-Լէ-Կոնէս, Իսի-Լէ-Մուլինօ, Շալիլ, և ապա ի հարաւային շրջան՝ Նիս, Սան Ռաֆայէլ, Լա Սիոթա, Մարսէյլ իր բոլոր թաղամասերով՝ Փրատօ, Պոմոն, Սէն Մարկրիթ, Սէն Լու, Սէն Ժերօմ, Սէն Անթուան, Պուլվար Օտտօ, և հոսակ ապա ի Լիոն և ի շրջակայս՝ Սէն Էթիէն, Վիէն, Վալանս, Տէսին և այլ վայրեր: Ջանացինք ըլլալ ժողովուրդին հետ հո՛ն ուր ան կ'ապրի, պագնել բոլորին որ Հայոց Եկեղեցին և անոր Հովուապետը ժողովուրդին հետ են, որովհետև մեր եկեղեցին, Աստուծոյ եկեղեցին է ժողովուրդի՛ն մէջ և ժողովուրդի՛ն համար:

Մենք փառք կուտանք Աստուծոյ որ Մեր այցելութեան ամբողջ տևողութեան և ամենուրեք ականատես վկան եղանք մեր ժողովուրդին սիրոյն և կապուածութեան իր հոգևոր ու ապագային կեանքի օճախին՝ Հայոց Առաքելական և Ապագային Եկեղեցիին:

Համայնքային կեանքի թափն ու որակը ձեր բոլորի մասնակցութեան եղանակէն և ուժգնութենէն կախում ունին: Ամենէն էական սկզբունքը մասնակցութեան (participation) առաքինութիւնն է, յանձնառութեան (engagement) կամքը և կամաւոր ծառայութեան ու զոհաբերութեան ոգին: Մենք ուրախութեամբ հաստատեցինք, որ ձեր քաղաքացիական կեանքի թէ՛ պետական-քաղաքային, թէ՛ տնտեսական, ճարտարուեստական, վաճառականական, գործառնական և թէ կրթական-մշակութային բնագաւառներուն մէջ կարևոր նուաճումներ էք կատարած և շատ աւելի աշխոյժ ձևով կը բերէք ձեր մասնակցութիւնը Ֆրանսայի ընդհանուր կեանքին քան ինչ որ կ'ընէիք տասնամեակներ առաջ: Մեր ապագային-եկեղեցական, հայկական համայնական կեանքին մէջ կոչուած էք առաւել չափով բերելու ձեր մասնակցութիւնը և կատարելու ձեր ներդրումները հաւաքական մեր ջանքին առաւել պտղաբերման համար:

Անհրաժեշտ կը գտնենք որ մեր հաւատացեալներու կրօնական,

Հոգևոր եկեղեցական կեանքը վերանորոգուի և կենսունակ ընթացքի մէջ մտնէ, որպէսզի չափազանց աշխարհայնապաշտական ոգիով տիրապետուած ներկայ ժամանակներու յատուկ կենցաղին մէջ հոգեկան արժէքներու մշակման և մեր մարդկային ու ազգային կեանքի առողջ պահպանման ու ստեղծական ընթացքի յառաջացման աղբիւր մը դառնայ: Կոչ կ'ուղղենք մեր երիտասարդ սերունդին, որ եկեղեցւոյ կեանքին մէջ պատասխանատուութիւն ստանձնելու քաջութիւնը ունենան: Թող իրենց մէջէն ի յայտ գան անձեր որ կրօնական ապրում ունին և կոչումի գիտակցութիւն, որպէսզի հոգևորական դառնալու համար յատուկ աստուածաբանական ուսում ստանան և ֆրանսահայ ժողովուրդին կարենան ծառայել արդիւնաւորագոյն ձևով: Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանը բաց է նման երիտասարդներու համար:

Երկրորդ կարևոր երևոյթը որ Մեզի մասնաւոր ուրախութիւն պատճառեց, հայեցի դաստիարակութեան, հայ լեզուի կենդանի պահպանման տրուած կարևորութիւնն էր: Տեսանք որ հայկական դպրոցի կենսական և փրկաւէտ անհրաժեշտութիւնը նոր գիտակցութեան, համոզումի և նախանձախնդրութեան առարկայ դարձած է շատերուն համար: Մեզի համար հրճուանքի առիթ եղաւ Ֆրանսայի հողին վրայ, երեք նոր հայ ամենօրեայ կրթօճախներ անձամբ օրհնել, Իսի-Լէ-Մուլինոյի մէջ (Թարգմանչաց նորաբաց վարժարան), Մարսէյի մէջ ("Համազգային"-ի նոր դպրոցի հիմնաքարի վետեղում) և Լիոնի մէջ (Մարգարեան-Զաքարեան վարժարանի շէնքի բացում): "Դպրոցասէր"ի այնքան ծանօթ վարժարանին Մեր այցելութիւնը ինչպէս նաև միօրեայ վարժարաններու գործունէութիւնը, ինչպէս Նիս քաղաքի մէջ Պարսամեան դպրոցը, առաւել ևս պայծառացուցին Մեր հայեցողութեան մէջ հայերէն լեզուի և հայեցի կրթութեան տրուած կարևորութիւնը ֆրանսահայ գաղութին կողմէ:

Մեր յորդորն է որ Ս. Մեսրոպի հայագիծ գիրն և հայահունչ լեզուն շարունակեն ունենալ իրենց արժանի տեղը յարաճուն ծաւալումով և խորացումով ֆրանսահայ կեանքին մէջ: Անշուշտ կ'անդրադառնանք որ ֆրանսերէն լեզուի և ֆրանսական մշակոյթի տիրապետութիւնը բնական երևոյթ է և անհրաժեշտ մեր ժողովուրդին պարգացման համար: Նոյնքան և հաւատացողն ենք այն ճշմարտութեան որ հայկական ուսումը չի հակասեր ֆրանսականին. ընդհակառակը կրնայ և նկատուիլ որոշ չափի ու տեսակի մշակութային առաւելութիւն: Ամէն ինչ կախում ունի հաւատքէն, սէրէն, նուիրումէն և զոհաբերութենէն: Ընտանիքէն մինչև դպրոց, եկեղեցիէն մինչև հայկական կեդրոններ, հայերէն լեզուի ուսուցումը կրնայ դառնալ արգասաբեր եթէ ճիգերը համախմբուին և համակարգուին և նուիրեալներու փառանգը աստուարանայ և զօրանայ: Եւ մեր եկեղեցին իր ազգային աւանդական առաքելութեան բերումով հարկ է որ մնայ հայ կրթական դաստիարակչական կեանքին զօրավիգ կանգնող գլխաւորագոյն հաստատութիւններէն մէկը, ինչպէս է ընդհանրապէս Միջին Արևելքի և այլ արտասահմանեան երկիրներուն մէջ: Ոչ ոք կրնայ Արևելքի և այլ արտասահմանեան երկիրներուն մէջ և անգիտանալ որ հայ դպրոցը ծնած է Հայց. եկեղեցւոյ ծոցին մէջ և աճած է անոր կողքին:

Բ

Մեր այցելութեան ընթացքին մէջ կարևոր տեղ գրաւեցին նաև միջ-եկեղեցական յարաբերութիւնները: Կաթոլիկ, Օրթոտոքս, Աւետարանական եկեղեցիներու պետերուն, Պապական Նուիրակին հետ Մեր յաճախակի տեսակցութիւնները, խօսակցութիւնները, աղօթքները, "Մէն-Սերժ"ի Ռուս Օրթոտոքս Աստուածաբանական դպրոցին և գիտական հետապօտութեան կեդրոնին Մեր այցը, և այլապան այլ հանդիպումներ, թէ՛ Փարիզի, թէ՛ Նիսի, թէ՛ Մարսէյի և թէ՛ Լիոնի մէջ Մեզի առիթ ընծայեցին տեղեակ մնալու Ֆրանսայի և առհասարակ Արևմտեան Եւրոպայի մէջ տիրող կրօնական կացութեան և ժողովուրդի դիմագրաւած հարցերուն, մանաւանդ այս օրերուն, երբ ողջ քրիստոնէայ աշխարհը կը պատրաստուի գիտակցական նոր արթնութեամբ նշելու քրիստոնէական պատմութեան երկրորդ հապարամեակի աւարտը և ողջունելու երրորդին արշալոյսը:

Այս հանդիպումները նաև Մեզի ընծայեցին պատշաճագոյն առիթ՝ մեր եկեղեցիին, մեր ազգի ու մեր վերանկախացեալ հայրենիքին նոր կացութիւնները պարզաբանելու, և լուսաբանելու որոշ հարցեր կապուած մեր եկեղեցւոյ առաքելութեան, մեր հայրենի ժողովուրդի ներկայի դրութեան և դժուարին պայմաններուն, և Արցախի ժողովուրդի իրաւունքներու ճանաչման և Արցախեան հարցի խաղաղ միջոցներով ամբողջական և արդար լուծման:

Ժամանակը որուն մէջ կ'ապրինք՝ հաղորդակցութեան, յարաբերութեան, փոխազդեցութեան արագընթաց շարժումներով է յատկանշուած: Մենք, որպէս Հայց. եկեղեցի և հայ ժողովուրդ, չենք կրնար ապրիլ կղզիացման հոգեբանութեամբ և ինքնամեկուսացման կենսափիլիսոփայութեամբ: Ուշենք անգամ՝ աշխարհի դրուածքը թոյլ չի տար: Կարիքն ունինք առողջ մօտեցումով մեր եկեղեցւոյ յարաբերութիւնները սերտացնելու այլ եկեղեցիներու հետ քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ կեանքին գործօն մասնակցութիւն բերելով ի շահ մեր եկեղեցւոյ զօրացման և ծառայութեան ուժեղացման ու տարածման:

Մեր սպասումն է որ յառաջիկային առաւել ևս ծաւալ ստանայ Ֆրանսայի մէջ մեր եկեղեցւոյ միջ-եկեղեցական գործունէութիւնը թէ՛ հոգևորականներու և թէ՛ աշխարհական անդամներու մասնակցութեամբ: Լայն հնարաւորութիւններ և դրական մթնոլորտ կայ այս ուղղութեամբ: Հարկ է վանոնք օգտագործել յօգուտ մեր Հայց. Առաքելական Սուրբ Եկեղեցիին և մեր ազգին:

Գ

Ուրիշ կարևոր մէկ բաժինը Մեր հովուապետական այցելութեան գրաւուեցաւ Ֆրանսայի մէջ պետական և քաղաքային իշխանութեանց հետ Մեր ունեցած հանդիպումներով և տեսակցութիւններով: Մեզի համար սքանչելի առիթներ էին այն հանդիպումները զորս ունեցանք Սենայի նախագահ՝ Պրն. Ռընէ

Մոնորիի և Արտաքին գործոց նախարար՝ Պրն. Հերվե տը Շարրեթի հետ և որոնց ընթացքին մեր եկեղեցւոյ, մեր հայրենիքի և Արցախի հիմնական հարցերու շուրջ ունեցանք խորքային բնոյթ կրող խօսակցութիւններ: Բնականօրէն այդ բոլոր տեսակցութեանց զագաթնակէտը եղաւ Ֆրանսայի վսեմաշուք նախագահին՝ Պրն. Ժազ Շիրաքի հետ Մեր հանդիպումը 6 Փետրուարին, Էլիզէի նախագահական պալատին մէջ: Թէ՛ Մեր առանձնական խօսակցութեանց ընթացքին և թէ՛ հրապարակային արտայայտութեանց մէջ Մենք զգացինք Նախագահին յատուկ սէրն ու համարումը հանդէպ հայ ժողովուրդին: Նոյն կեցուածքն ու վերաբերումը գտանք նաև այլ պետական անձնաւորութեանց մօտ:

Փարիզի և շրջաններու, Նիսի, Մարսէյի և շրջաններու, Լիոնի և այլ շրջաններու քաղաքապետները և նահանգապետներն ու քաղաքային իշխանութեանց այլ ներկայացուցիչները առաւել մանրամասնեալ ձևով արտայայտուեցան մեր ֆրանսահայ ազգակիցներու կեանքին ու գործունէութեան մասին: Բոլորի վկայութիւններու մէջէն Մենք հրճուանքով զգացինք ջերմ գնահատանք մեր ֆրանսահայ գաղութի օգտաշատ մասնակցութեանը մասին Ֆրանսայի ընդհանուր կեանքին:

Ուրախութեամբ կ'ուզեմ նշել այն իրողութիւնը որ Պետական շրջանակներու հետ Մեր յարաբերութեանց ընթացքին Մենք միշտ Մեր կողքին ունեցանք Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպանը ֆրանսական իշխանութեանց մօտ յանձին Պրն. Վիգէն Զիտեչեանին: Որքա՛ն հոգեկան բաւարարութիւն էր մեր սեփական հայրենի պետութեան ներկայութիւնը զգալ երբ ուրիշ պետութիւններու ներկայացուցիչներու հետ կը հաղորդակցէինք, մանաւանդ երբ կը տեսնէինք բոլորի բարի տրամադրուածութիւնը հանդէպ մեր հայրենիքին և ապառ ու անկախ պետութեան:

Ապրիլ, սիրելի՛ պաւակներ Հայց. Եկեղեցւոյ և հայկեան ազգի, որ ձեր պարկէշտ աշխատանքով, քաղաքացիական լուրջ գիտակցութեամբ, նախաձեռնողական գործունէութեամբ "գաղթական Հայ" ու պատկերը շատոնց վերածեր էք "տիպար քաղաքացի"ի պատկերին: Շարունակեցէ՛ք ձեր տնտեսական պայմաններու պարգացումը, սակայն միշտ բարձր պահելով հոգևոր, բարոյական, իմացական, մշակութային, գեղարուեստական արժէքներու տեղը ձեր կեանքին մէջ: Զարգացում, յառաջդիմութիւն բառերը սոսկ նիւթական պայմաններու ճոխացման հետ չզուգորդենք: Իսկական բարեկեցութիւնը բառին իսկ մէջ է սահմանուած — "բարի-կեցութիւն": Այսինքն այնպիսի կեանք, որ բարի սկզբունքներու կիրարկումով, բարի, ճշմարտօրէն երջանիկ ապրումներով և գործերով ձեռք կը բերուի:

Ճոխակեցութիւնը բարեկեցութիւն չէ անպայման: Շռայլօրէն սպառողական կեանքը ունի իր մէջ նաև փորձութիւնը հեռանալու ոչ միայն հոգեկան մաքուր կեանքէն, այլ նաև հայութեան ազգային կեանքի շրջագիծէն: Չոհ մի՛ երթաք մարդը մարդուն մէջ և հայը մարդուն մէջ փճացնելու ոյժ ունեցող փորձութիւններուն: Մի՛ տարուիք մակերեսային կեանքի վաղանցուկ և փցուններուն:

երևոյթներէն, որոնք հովի պէս կու գան և հովի պէս կ'երթան: Կառչեցէ՛ք ձեր դարաւոր ապգի տոկուն առաքինութիւններուն, աւանդոյթներուն և արժէքներուն: Հայոց Ս. Եկեղեցւոյ սրբաշունչ ոգին, Հայոց մշակոյթը անցեալին և ներկային, հայոց լեզուն մեր բոլոր դարերը կամրջող և մեր ապգի միութեան ոսկի թելը կապնող, հայրենիքի սէրն ու անոր նոր անկախութեան պօրացման գիտակցութիւնը թող դառնան ձեր կեանքին մէջ առանցքային դեր և գործօն ապդեցութիւն ունեցող ոյժեր և ապդակներ:

"Հող բռնէք՝ դառնայ ոսկի"

"Ոսկի բռնէք՝ դառնայ հոգի":

Դ

Մեր հովուապետական անդրանիկ այս այցելութեան ընթացքին, բոլորդ ալ պգացիք, որ Մենք եկեղեցիներու բեմերէն, սրահներու ամպիոններէն արտասանած հրապարակային պատգամներով ջանացինք ըլլալ հարապատ թարգմանը մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյ և վերանկախացեալ Հայաստանի ու Արցախի արդար դատին:

Նախ փառք տուինք Աստուծոյ որ Մեզի շնորհեց պատիւն ու պարտքը ըլլալու առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որ հովուապետական այցելութեամբ եկաւ արտասահման Հայաստանի ապատ ու անկախ Հանրապետութենէն որպէս անոր քաղաքացին, բերելով իրեն հետ նոր շունչը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի. և Մայր Հայրենիքին: Մեր ճիգն եղաւ պարզել ֆրանսահայ ժողովուրդին իսկական պատկերը մեր եկեղեցիին և հայրենիքին, այնպէս ինչպէս Մենք այդ պատկերը ապրեցանք անձնական փորձառութեամբ, Հայաստանի մայր հողին վրայ, անցնող շուրջ երկու տարիներու ընթացքին, Մեր Կաթողիկոսական ընտրութենէն ու գահակալութենէն ասդին: Հայաստանաւիւրք յարաբերութեան ընդհանուր ծիրին մէջ՝ մեր Ս. Եկեղեցւոյ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դերը պատկերացուցինք որպէս այդ յարաբերութեան սերտացման և առողջ արդիւնաւորման բերուելիք կարևորագոյն նպաստ: Մայր Աթոռը միայն Հայաստանի ժողովուրդին Աթոռը չէ: Հայց. Առաքելական ընդհանուր եկեղեցւոյ Մայր Աթոռն է, Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, որ իր բոլոր պաւակներուն մէջ ներկայ է սիրոյ և ծառայութեան անխտրական ու մայրաշունչ հոգատարութեամբ: Ձե՛րն է ան, ինչպէս դուք՝ իրենը, հարապատութեան անխախտելի և անփոխարինելի կապուածութեամբ:

Դուք Ֆրանսայի մէջ կոչուած էք ձեր լիագոյն բաժինը բերելու մեր հոգևոր կեդրոնի վերաշխուծացման, վերանորոգեալ կեանքի ու առաքելութեան պտղաբերման համար: Մանաւանդ այս յառաջիկայ տարիներուն, երբ ողջ եկեղեցիով, ապգով ու պետութեամբ կը պատրաստուինք տօնակատարելու քրիստոնէութեան որպէս պետական կրօն ճանաչման 1700-ամեակը: Ինչպէս հրապարակային Մեր խօսքերուն մէջ յաճախ կ'անդրադառնայինք, մեր Առաքելական Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան

1700-ամեակը համաքրիստոնեական տեսանկիւնով դիտուած բացառիկ նշանակութիւն ունեցող երևոյթ է: Անոր մէջ 1700 տարիներու քրիստոնեական հաւատքով թրծուած և իրագործուած մեր ազգային կեանքին շքեղ պատկերը պիտի պայծառօրէն դրսևորուի որպէս ներշնչման աղբիւր՝ մեր այսօրուայ և վաղուայ կեանքին համար: Ուխտագնացութիւններ պիտի կատարուին, ցուցահանդէսներ և գիտաժողովներ պիտի կազմակերպուին, նոր գիրքեր պիտի հրատարակուին, հայոց ճարտարապետութեան գոհար վանքեր ու եկեղեցիներ պիտի վերանորոգուին, նոր եկեղեցիներ պիտի կանգնին, քաղաքամայր Երևանի մէջ նոր ու շքեղակերտ Մայր Եկեղեցի (Cathédrale) պիտի բարձրանայ: Այս բոլորին մէջ Մեր սպասումն է որ Ֆրանսայի մեր ժողովուրդը իր բոլոր խաւերով, մանաւանդ երիտասարդութիւնը, բերէ իր պատուաւոր դերը:

Մայր Աթոռը և Մայր Հայաստանը այսօր մեր բոլորի հաւաքական պատասխանատուութիւնն է: Բնականօրէն սփիւռքահայ մեր օճախները - անոնց շարքին ֆրանսահայութիւնը - պիտի շարունակեն առոյգ պահել իրենց գոյութիւնն ու գործունէութիւնը իրենց ապրած երկիրներուն մէջ: Բայց սա արգելիչ պատճառ չի կրնար ըլլալ որ մեր մտահոգութիւններուն և ջանքերուն մէջ անտեսենք Մայր Հայաստանն ու Մայր Աթոռը: Չենք կրնար, որովհետև - ինչպէս այցելութեանս ընթացքին ուրախութեամբ հաստատեցի - անոնց սէրը կենդանի է ձեր բոլորին մէջ, ինչպէս արտասահմանի ողջ հայ ժողովուրդին մէջ: Ան որ կը սիրէ՝ չի կրնար իր սէրը բանտել: Մէրը ճառագայթում է. ճառագայթներուն անունն է բարիք: Հայաստանը մեր սիրոյն սկեռակէտն է: Ըսուած է. «Հոն ուր ԿԱՄՔ կայ՝ Հոն ճանապարհ մը կայ»: Մենք կը սիրենք աւելցնել. «Հոն ուր ՍԷՐ կայ՝ բազում ճանապարհներ կան»:

Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին երբ ձեր բոլորի մասին կը մտածեմ և կ'աղօթեմ սա պահուն, երէկուան պատարագէն ու յատուկ աղօթքէս ու պատարագէս ետք իմ Հայրապետական պատգամը կ'ուզեմ փակել մէջբերելով Աւետարանի այս բառերը ուր Յիսուս Քրիստոս յաճախ կ'ըսէ թէ խօսքերը լսել չի բաւիր, այլ պանոնք կեանքի կոչել և գործի վերածելն է անհրաժեշտը և էականը: Այսպէս Ան կ'ըսէ թէ իրեն ճշմարտապէս հետևողները անոնք են որոնք «պբանն Աստուծոյ լսեն և առնեն» ("Աստուծոյ խօսքը կը լսեն և կը գործադրեն", ՂՈՒԿ. Ը. 21): Իր հետևողները անոնք են որոնք "զհետ նորա երթան, զի ճանաչեն զձայն նորա: Զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ի նմանէ, զի ոչ ճանաչեն զձայն օտարաց" (ՅՈՒԷ. Ժ. 4-5): («Անոնք կը հետևին Իրեն, որովհետև Իր ձայնը կը ճանչնան: Օտարին չեն հետևիր, ընդհակառակը, կը փախչին անկէ, որովհետև օտարներուն ձայնը չեն ճանչնար»):

Մեր այս պատգամին բառերը դուք լսեցէք և իմացէք Քրիստոսի խօսքին պօրութեամբը, որ այնքան ուժգնակի ձևով արտայայտուած է հետևեալ պատկերաւոր բառերով, քաղուած ամբողջ Աւետարանն իր մէջ խտացնող Լերան Քարոյէն. -

«Ով որ իմ այս խօսքերս կը լսէ և կը գործադրէ զանոնք, պիտի նմանի այն իմաստուն մարդուն, որ իր տունը ժայռի վրայ կը շինէ: Անձրևները կու գան,

գետերը կը յորդին, հովերը կը փչեն և կը զարնուին տան, բայց տունը չի կործանիր, որովհետև ժայռի վրայ հաստատուած է: Իսկ ով որ իմ այս խօսքերս կը լսէ բայց չի գործադրեր զանոնք, պիտի նմանի այն յիմար մարդուն, որ իր տունը աւազի վրայ կը շինէ: Անձրեւները կու գան, գետերը կը յորդին, հովերը կը փչեն և կը զարնուին տան, և տունը կը կործանի: Եւ ի՞նչ ահաւոր կ'ըլլայ այդ տան կործանումը»:

Մենք կոչուած ենք եկեղեցի և ապգ, հայրենիք ու հայութիւն վերականգնելու և — թող թոյլ տրուի իմ գրիչին այս բառը — մշտականացնելու:

Սա՛ է մեր հայու ճակտի գիրը:

Պայծառ պահենք պայն Ֆրանսայի մէջ և ողջ աշխարհի տարածքին...:

Ողջ լերուք ի Տէր, պօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մենջ. ամէն:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2 Մարտ, 1997

ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին